

Մլովենիայի ակումբների արտոնագրման համակարգը

Մլովենիայի Ֆուտբոլի Ասոցիացիան (ՄՖԱ) համեմատաբար երիտասարդ է, չնայած եւ հիմնադրվել է 1920թ-ին: Մլովենիան ձեռք բերեց իր անկախությունն Եվրոպայում տեղ գտած գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում, եւ ֆուտբոլային ասոցիացիան դարձավ ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի լիիրավ անդամ 1992-ից 1993թթ-երին: Մլովենիայում ֆուտբոլ են խաղում 9 ռեգիոնալ ասոցիացիաներում, իսկ մրցավարներն ու մարզիչները միավորված են ՄՖԱ-ի հովանու ներքո գործող իրենց իսկ կազմակերպություններում: Տարբեր մակարդակների ակումբները հանդիսանում են սլովենական ֆուտբոլի կարեւորագույն բաղադրիչը եւ հանդիսանում են հիմնական ֆուտբոլային միջոցառումների հիմք: Պատմական եւ տարածքային պատճառները, ինչպես նաեւ ֆուտբոլի դերը հասարակությունում, արտացոլված են ֆուտբոլային ասոցիացիայի կառուցվածքում: Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մակարդակով կարեւոր դեր է խաղում նաեւ ասոցիացիայի լիգան՝ որպես բարձրագույն խմբի առաջնությունների կազմակերպիչ: Եվրոպական քարտեզի վրա սլովենական ֆուտբոլային ընտանիքը գրավում է համեմատական փոքր տեղ, չնայած ֆուտբոլը Մլովենիայում հանդիսանում է #1 մարզաձեւը՝ դատելով խաղացողների, ակումբների, մարզիչների եւ մրցավարների քանակից, մարզաձեւի ներկայացուցչությունից մարզերում եւ այլն: Վերջին տարիներին նկատվում է գրանցված խաղացողների, մանկապատանեկան թիմերի, ենթակառուցվածքների մեջ կատարվող ներդրումների աճի, մասսայական ֆուտբոլի մակարդակի պրոֆեսիոնալիզմի, մանկապատանեկան ակադեմիայի եւ բարձրագույն խմբի ֆուտբոլի քանակի աճ: Մլովենիան նաեւ հանդիսանում է ամենափոքր եւ երիտասարդ երկրներից մեկը, որոնք երբեմնիցե մասնակցել են կարեւորագույն մրցաշարերին (ԵՎԸՈ-2000 եւ աշխարհի առաջնություն 2002):

Ակումբների արտոնագրման կիրառվող ՄՖԱ-ում

Մլովենիան հանդիսանում էր անդրանիկ ասոցիացիա ՈՒԵՖԱ-ի այս նախագծում եւ ներգրավվել է արտոնագրային գործընթացների կիրառմանը 2002թ-ից: Բացի ՈՒԵՖԱ-ի այս ծրագրի մեջ ներգրավվելուց՝ մեր նախագծային թիմի հիմնական խնդիրն էր Մլովենիայում ակումբների արտոնագրման համակարգի ռազմավարության ստեղծումը՝ իր կանոնակարգերով, համապատասխան մարմիններով եւ հաղորդակցության կոնցեպցիայով: Նախագծի զարգացման սկզբնական փուլում կայացվեց որոշում, ըստ որի՝ արտոնագրման համակարգը պետք է կիրառվեր ոչ միայն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող ակումբների նկատմամբ, այլեւ ազգային մակարդակով: Հաշվի առնելով մեր կանոնակարգերում ակումբների արտոնագրման համակարգի տարրերի ներկայությունն արդեն այն ժամանակահատվածում (օրինակ, մանկապատանեկան թիմեր, մարզչական որակավորում եւ ենթակառուցվածքներ), ակումբների արտոնագրման համակարգի ավելի լայն կիրառումը անհրաժեշտ էր մեր ֆուտբոլի չափանիշների մակարդակի բարձրացման համար: Ակումբների արտոնագրման քառաստիճան ազգային համակարգը (ՈՒԵՖԱ, 1-ին, 2-րդ եւ 3-րդ լիգաներ) ներկայացվեց իր տեղայնացված չափանիշներով եւ ընթացակարգերով: Յուրաքանչյուր տարի ավելի քան 50 ակումբ ստանում են արտոնագրեր՝ մասնակցելով ստանդարտ արտոնագրային գործընթացներին:

Ակումբների արտոնագրման կարեւորագույն նշանակությունն արտացոլված է նաեւ մեր ասոցիացիայի ձեւավորման մեջ, որտեղ արտոնագրման բաժինը հանդիսանում է մեր վարչակազմի ստորաբաժանումներից մեկը: Մեր նախագծային թիմի աշխատանքների շարունակության համար 2003թ-ին ձեւավորվեց արտոնագրային վարչակազմը: Վարչակազմ ներգրավվեցին մեր ասոցիացիայի եւ լիգայի առկա եւ համապատասխան ռեսուրսները, ինչպես նաեւ ֆինանսական եւ իրավական հարցերով արտաքին խորհրդատուներ: Մեր արտոնագրային վարչակազմի անձնակազմը մնում է անփոփոխ 2003թ-ից, ինչը համակարգի աշխատանքներին տալիս է կայունության եւ որակի համապատասխան մակարդակ:

Ակումբների արտոնագրման արդյունքները

Ակումբների արտոնագրման կիրառումը երկարատև կայունություն բերեց Սլովենիայի ակումբային ֆուտբոլին, չնայած սկզբնական փուլում առաջացել էին խնդիրներ որոշ “ավանդական” ակումբների հետ՝ նրանց ֆինանսական եւ կազմակերպչական խնդիրների պատճառով: ՄՖԱ-ն ակումբների նկատմամբ շատ հարգալից էր, բայց միաժամանակ խստապահանջ, քանի որ հավասար վերաբերմունքն ակումբների նկատմամբ հանդիսանում է մեր հիմնարար մոտեցումը: Մենք միշտ փորձում ենք պաշտպանել մրցաշարերի շարունակականությունը, ստեղծել լիզաներ՝ ըստ մարզական ցուցանիշների եւ արտոնագրային որոշումների եւ ամրապնդել մեր ֆուտբոլի ապահովությունը՝ ֆուտբոլային բոլոր այլ շահագրգիռ կողմերի հետ մշտական շփումներով:

Արտոնագրային 1-ին ցիկլում (2004-2005թթ. մրցաշրջան) միայն 4 ակումբ հաջողությամբ անցան արտոնագրումն ՈՒԵՖԱ-ի մակարդակով: Հաջորդ մրցաշրջաններում արտոնագրված ակումբների քանակը շարունակեց աճել՝ գուզընթաց ակումբների ամրապնդմանը: Արտոնագրային վերջին փուլում (2008-2009թթ-երի մրցաշրջան) բոլոր ակումբներն հաջողությամբ անցան արտոնագրումը՝ ըստ ՈՒԵՖԱ-ի մակարդակի: Ընդհանուր առմամբ ավելի քան 80 ակումբներ արտոնագրվեցին վերջին տարիներին, ընդ որում արտոնագրված ակումբների աճը շարունակվում է:

Առավելությունները

Ակումբների արտոնագրման համակարգի առավելություններից մեկն էլ հանդիսանում է սլովենական ֆուտբոլի վերլուծական հետազոտությունների եւ համեմատական վերլուծությունների անցկացման հնարավորությունը՝ հաշվի առնելով ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը, մեր ակումբների արտոնագրման համակարգի, հասանելի ֆուտբոլային տվյալների եւ տեղեկատվության հուսալիությունն ու ակումբներից ստացված դրական արձագանքները:

Ակումբների արտոնագրման համակարգի ստեղծման իրական առավելություններից մեկն էլ ազգային սոցիալիստների, լիզաների եւ ակումբների միջեւ փորձի փոխանակման հնարավորությունն է: ՈՒԵՖԱ-ն խաղում է շատ ակտիվ եւ կարեւոր դեր խորհրդակցությունների եւ սեմինարների կազմակերպման հարցում, ինչպես նաեւ խրախուսելով ազգային ասոցիացիաների արտոնագրողներին շփվել միմյանց հետ: Եվրոպայում ֆուտբոլի հասկացության ամրապնդման առավել ճիշտ որոշումն է՝ տարբեր ֆուտբոլային մշակույթների, լիզաների կառուցվածքների գիտությունն ու ըմբռնումը, ինչպես նաեւ զարգացման ներուժի հայտնաբերումը:

Ակումբների արտոնագրումը մի դինամիկ համակարգ է, եւ այն կշարունակի զարգանալ՝ ֆինանսապես անկայուն մթնոլորտում ֆուտբոլային “բաժնետերերին” ավելի լավ աջակցություն տրամադրելու համար:

Ակումբների արտոնագրումը շարունակում է մնալ կարեւորագույն նախագիծ ազգային եւ միջազգային մակարդակներով: Ողջ Եվրոպայով արտոնագրողների հիմնական նպատակներից մեկը հանդիսանում է ֆուտբոլային ստանդարտների բարձրացումը բոլոր “արտոնագրային” ոլորտներում: Մենք կարող ենք պաշտպանել մեր ֆուտբոլային ապագան միայն եվրոպական ֆուտբոլի բոլոր մակարդակներով թափանցիկության, ապահովության եւ համերաշխության շարունակական ամրապնդմամբ: ՄՖԱ-ն հպարտ է այդ գործընթացներում ներդրում կատարելու իր հնարավորությամբ, քանի որ դրանք կբերեն ավելի լավ եւ ավելի բարեկամական ֆուտբոլային մթնոլորտի ստեղծմանը:

Ալեշ ԶԱՎԼ

ՄՖԱ-ի Արտոնագրման մենեջեր

ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կոմիտեի անդամ